


ՏՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ  
Ն. ՓՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է  
գրութիւն պէտք ուղղել առ  
Տնօրին. ԱՐՇԱՂՈՅՍ րազմի  
ԳԱՅԻՆԷ (Եգիպտոս)



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՒԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասիկն.	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐԷՆԵՐ	
Տարեկան Տրամբ	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆՈՒԿ  
ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ  
ԽՈՐԱԳՐՈՒՄԵԱՆ ՎՐԱՅ Է :

ԽՈՐԱԳՐՈՒՄԵԱՆ ՈՂՊՈՒՄ  
ԳՐՈՒՄԵՆԷՍ ԵՍ Զ'ԵՆ ՏՐԱԻՐ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ  
ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐԵԼԻ ԵՆ

F. TOROSSIAN  
Direc.-propr. du journal arménien  
ARCHALOUYCE  
LE CAIRE (EGYPTE)

### ՎԵՐՋԱԼՈՅՍԻ ԶԱՅՆԵՐ

Անզուգահայտ հաճոյք մ'է ինչ հայրե-  
նասէր սիրտերու աւետել երևումը դրքոյ-  
կի մը, որուն խորագիրը կը փոշիոյրի յօդ-  
ուածիս ճակտին վրայ և զոր « Ողբագրեց  
և Հոգեգրեց Խրիստեան Հայրիկ » :

Տիեզերահոյակ է սրտաթունդ անունը  
այդ օժեւալ տաւազարին, որուն հոգեշունչ  
խօսքերն ու թելագրութիւնները իբրևամբ  
« քանչացուցին », միթիարեցին և կազուրե-  
ցին ընթերցասէր հասարակութիւնը մէկէ  
աւելի քարոզներով և հատորներով . այս  
վերջիններուն մէջ կը բաւէ յիշել « Խաչի  
ձառ » ը « Հրաւիրակ յերկիրն Աւետեաց » ը,  
« Սիրաք և Սամուէլ » ը ևն . ևն :

Նորին Ս . Օծութիւնը հոգեգրեցալ գրող  
մ'է Ս . Հայրապետին մասնագիտութիւնն  
է՛ մեզ յուշել, հմայել, խանդավառել, մի-  
անդամայն և խաղաղել : Անոր ներշնչեալ  
գրչին տակ քաղցրակապալ առուակը ահե-  
ղամուռնչ ալիքներով կը փքանայ և հա-  
մայնակուլ Ովկէսան հեշտաւէտ օրբան մը  
կ'ըլլայ : Պճնափայլ ծաղկատառները մահա-  
տու անապատներու կը փոխուին, և անծայ-  
րածիր աւազածովերը խնկաբոյր վարդերով  
կը գեղազարդուին : Մարդաշատ աւանները  
մեռելաքաղաքներու կը վերածուին, և ոս-  
կերտեաց գաշտեր վերակենդանացածնե-  
րու ինդերդներով կ'ոգևթուրին : Ես կը գը-  
րեմ խնդերդ, դուք կարգացէք օրհներդ :  
Վասնզի հոն, այդ վերջին բառին մէջն է  
այդ գերազանցօրէն Պատկառելի Մերուն-  
ւոյն սրտախօսութեանց գազանիքը :

Թէև Ազգապետ, թէև եկեղեցապետ,  
թէև Մայրագոյն Հայրապետ, գերծ է ամեն  
ինքնախար և արդահատելի յաւակնութենէ-  
նորին վեհափառութիւնը քաջ ըմբռնած է  
որ՝ նոյն իսկ իր ամենավսեմ պաշտօնին բեր-  
մամբ՝ ուրիշ մահկանացուներուն վրայ չ'ու-  
նի մի որ և է առաւելութիւն, բայց եթէ  
աւելի տառապիլ, աւելի հառաչել, աւելի  
ողբալ և « Աստուծոյ ծառաներուն ծառայն »  
ըլլալ : Այդ գիտակցութիւնն է որ այնքան  
կը բարձրացնէ, կը փառաւորէ նորին Ս . Օ-  
ծութիւնը, և անոր քարոզ-գրութիւնները՝  
օրհնաբանութիւններ և - հետեւաբար - կեան-  
քի յաւատ խաւարահալած մենտորներ կ'ընէ :  
Իր պարզ, ընտանի, անտիականներուն ան-  
գամ դիւրահասկանալի բառերով Վեհափա-  
ռը աւելի կը շարժէ, կը դզրդէ, կը համոզէ,  
կը լացնէ, կը խնդացնէ քան մի որ և է սո-  
փեաս իր ուռուցիկ, արուեստակեալ ոճե-  
րով : Ս . Թագէի ամուսնաբալը աւելի սրտ-

թափանց է, վասնզի քայլ առ քայլ և կէտ  
առ կէտ կը ջանայ հետեւիլ ԱնՈՐ, զոր քա-  
րոզելու, ճանչցնելու ամենավսեմ պաշտօնն  
ստանձնած է, և ՈՐՈՒՆ ամբողջ պատուէր-  
ները՝ իբրև անվիճելի ճշմարտութիւններ՝  
բացարձակապէս անպաճոյճ և բնական եղա-  
նակներով հաղորդուած են, ուղղուած ըլ-  
լալով մանաւանդ « հոգևով ազբասներուն » :

Նոյն պարզասիրութիւնը, նոյն ընտա-  
նութիւնը, նոյն օրհներգը կը գեղազարդեն  
նաև էջերը ներկայ դրքոյկիս, որ հաւաքա-  
ծոյ մ'է այլևայլ աղետարչ ողբերու, զոր  
հիւսած և երգած է « Հայոց Հայրիկ » յոյժ  
սրտաբեկ բայց միշտ յուսալիր :

- Հրեշտակ հոգիս իմ վերացոյց,
- Տարաւ իջուց մեռելոց դաշտ .
- Ո՛ր է, գիտէ՞ք, մեռելոց դաշտ .
- Ի Բարելո՞ն թէ Հայաստան .
- Հայաստան է, Հայաստան,
- Հայոց աշխարհ և Հայրենիք,
- Ուր զոհուեցան անմեղ անպարտ
- Հայ զաւակներ բիւր բիւր հազար :
- .....
- Կ'անցնի ձրմեռ, կուռայ գարուն,
- Մեռելոց դաշտ ծաղկազարդի .
- Անջատ, անջատ ստիքստիք
- Շարժին հրաշիւք, կրցին իրար
- Շունչ մի շնչէ կենդանարար,
- Յառաի կանգնէ մեռելոց դաշտ :
- .....

Բայց ինչու այդ վերնադիրը « Վերջա-  
լոյսի ձայներ » որ խիստ տխուր կը հնչէ  
Վասպուրականի Արծիւին խորհրդաւոր հո-  
ւանքներուն ակնապիչ հետևող տարաբիր  
սիրտերուն : Միթէ նորին Ս . Օծութիւնը իր  
պարած տարիներուն թուոյն վրայ յենլով  
կը կարծէ թէ այլևս ժամանակ չ'պիտի ու-  
նենայ իր հօտն առաջնորդելու դէպի ջը-  
րարբի վայրեր : Բնապէս հաւանական է այդ  
մտածումը : Բայց հաւատացեալները գիտեն  
նաև որ կը պաշտեն այն Աստուածը, զոր կը  
պաշտէր արքայն եզէկիէլ . զոր կը փառա-  
փանէր

« Մեր Սիմէօն ի տաճարին » :

Մաղթենք և աղերսենք որ թալլատար-  
ուի նաև նորին Ս . Օծութեան Մկրտիչ ծե-  
րունւոյն Մայր քաղաքին Մայր տաճարին  
գմբէթին տակ՝ ձեռնամաճ հայցել :

— Արդ արձակեալ զժառանգ թա՛, Տէր,  
ըստ բանի քու՛մ ի խաչաղութիւն զի տե-  
սին աչք իմ զօրն « հայց ելութեան » և տուր  
հանգիստ յոգնատանջ ոսկերաց իմոց ջօրն  
այցելութեան :

Բայց մէկ կողմ թողունք այդ որքան  
բաղձալի այնքան թաղծալի հեռապատկեր-  
ները և փութանք ըսել թէ « Վերջալոյսի  
Ձայներ » ը իրապէս լոյսադրիւրն ըլլալու  
սահմանուած են նոր Արշալոյսի մը որ պի-  
տի ծագի մեր խաւարանակ գեղեցիկ սե-  
ռին վրայ, և զայն պիտի օժտէ հայուհիներ  
բով, ամենտիկիներով սրնոց տիպարները  
այնքան կը սիրէ նկարագրել Վեհափառ Հե-  
ղինակը իր երկերուն մէջ :

« Վերջալոյսի Ձայներ » ու հովանաւորու-  
թեամբ « Արաւմիս » ի լոյս տեսնելը և մեր  
մէջ յարատեւելը մեզի երջանկութիւնը պի-  
տի տայ յարածամ յիշելու « Հայոց Հայ-  
րիկ » ը և անդադար կրկնելու թագակիր  
Մաղմոսերգուին Աստուածաղբեցիկ հետե-  
ւալ բառերը .

« Յիշատակն արդարոց օրհնութեամբ և  
ղիցի » :

Յօդուածս չ'կնքած պարտք կը համա-  
րիմ շնորհաւորելու « Արշալոյս » ի Տնօրէն և  
գործոյս տպագրիչ Տիար Ե . Թորոսեանը  
որ իր թերթովը ծանրապէս զբաղեալ լինե-  
լով հանդերձ, ըստ կարելոյն՝ փոյթ և խը-  
նամբ չ'է զլացած ընթերցողին ձեռքը տա-  
լու սահուն և փայլուն հատորիկ մը մեծ ճա-  
շակով տպագրուած, և՛ ինչ որ անդնահատե-  
լի ծառայութիւն մ'է ամբողջ ազգութեան՝  
Հայրիկին փառաւոր կենդանագիրով պճնա-  
զարդուած :

Այլ ևս տարակոյսի տեղի չ'կայ, երբ  
յաւելում թէ՛ Տ . Ե . Թորոսեանի անվճատ  
ջանքերուն և անյողողը աշխատութեանց  
շնորհիւ, եգիպտոսը օր մը գրականութեան  
կեդրոնի մը պիտի վերածուի, եթէ մերազ-  
նեայք սակայն բարեհաճին պէտք եղած ա-  
ջակցութիւնը չ'զլանալ իրեն, որուն՝ աւե-  
լորդ է ըսել, շատ պէտքը պիտի զգայ նա :

### ՏԱՐԵԿԱՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՊՐՈՅԻ

Վարժարանի տարեկան հարցաքննու-  
թիւնը պիտի սկիզբն հրապարակու կատար-  
ուիլ, յառաջիկայ երկուշաբթի, Յունիս 8  
առաւօտեան ժամը 9 էն մինչև 12, յոյժը-  
դաբար չորս օրեր, նոյն ժամերուն : Առանտ-  
ղաց ծնողները և բարեկամներ յորդանօք  
կը հրաւիրուին անձամբ ակնատես ըլլալու  
դպրոցի երկու տարուան մէջ կատարած  
յառաջդիմութեան :

ՀԻՄՆԱԿԻՐ-ՏՆՈՐԷՆ

ՊԱՏՃԷՆ ՀԱՆՐԱՊԵՐԻՆ

— 1006 —

Մեր նախորդ թուով ըրած խօստման համաձայն ի ստորև կը հրատարակենք պատճէնը՝ Գալստեան վարժարանի արդի նորընտիր հոգաբարձութեան դէմ եղած 48 ծրնորաց կողմէ ստորագրեալ հանրագրին, որ մատուցուած է ազգային վարչութեան Պատ. Գաղաքական Ժողովոյն և սրոյ մէկ օրինակը մեզ զրկուելով հրատարակութիւնը ինդըրուած է :

Ներկայ հանրագրի հրատարակումը առիթ կ'ընծայէ մեզ ի մտոյ ընդհանուր հայկացք մը ուղղել եզրկատուի ազգային վարչութեանց մատուցուած հանրագրերուն և անոնց ունեցած ազդեցութեան և արդիւնքին վրայ :

Գերապատիւ

Յովսէփ Եպիսկոպոս Այվազեան և Ազնուուաշուք անդամք Պատ. Գաղաք. Ժողովոյ ազգ. Դաւառ. վարչութեան եզրկատուի Հայոց

ի Գահիրէ

Գերապատիւ Հայր Արքայան

Արդէն Ձերք Արքայանութեան քաջամտութիւնէ Հայ ազգի այժմու ընդհանուր և ի մասնաւորի եզրկատուան գաղթականութեան սխուրկացութեան :

Եզրկատուի հայ հասարակութիւնը հիւանդ է իբրև ազգ՝ և կարտ՝ առակ ու ճարտար բըժիշկներու, որք լաւ ճանչնան իւր ցաւերն ու խորին վէրքերն և գիտնան անոնց բուն գարմանքն :

Այդ օտար ազգաց համայնակուլ ուղիէանի մէջ, մեր փրկութեան միակ լուսատու փարոսներն՝ մեր եկեղեցին ու վարժարանն են. ուր ուրեմն որքան կարեւորութիւն կ'ստանայ անոնց թէ՛ նիւթական և թէ՛ մանաւանդ բարոյսական մատակարարութիւնն : Նիւթականին մասին, մենք՝ գահիրէի հայոց վարժարանի աշակերտաց ծնողքք՝ նախապէս մեր անհուն շնորհակալութիւնը կը յայտնենք այն անզուգական անձնաւորութեան կարապետ աղա Գալստեանի, որ հիմնած է ազգ. վարժարանն և հոգացած անոր ապագայ ծախքերը յօգուտ ազգ. մանկատան : Ենորհակալութիւն նախ Գեր. Արքայանու-

թեանց և Պատ. Ժողովոյց, որ այնքան գովելի ջանքեր ստար կը կանգնիք կրթութեան գործին. ապա ներուի մեզ ստորագրեալներու գալու խնդրել ձեռնհաս վարչութիւնէն որ բարեհաճ իւր ծանօթ կրթասիրութեամբ և ազգասիրութեամբ չեղեալ համարել արդի անուանական ընտրութիւնն հոգաբարձութեան և կարգել կըրթական այդ կենսական գործին գլուխն յարմարոյն հոգաբարձութիւն մը, որպէսզի ծնողքս կարենանք վստահօրէն զրկել մեր զաւակներն այն վարժարանն որ ստիճանուած է պատրաստելու ապագայ սերունդն, ամեն բանէ առաջ իբրև հայ, և իբրև բարոյական մարդ :

Հակասակ պարագային լաւ է փակել վարժարանն, քան շարունակել ներկայ գրութեան մէջ :

Յուսալով որ ի սէր հայ մանկտանց դատարակութեան չ'պիտի մերժուի մեր խնդիրն ի համարը մասնաւոր Գեր. սպատուութեանը Ս. Էջոյն և մեր խորին յարգանքն մատուցանեմք Պատ. Ժողովոյց :

Ստորագրութիւնք  
Ծնողաց

ՅՈՒՐԵԼԵԱՆ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ

— 1006 —

Հաւաստի աղբիւրներէ կը տեղեկանանք թէ՛ Պէրպէրեան բարեհամբաւ վարժարանի քսանհինգամեայ յորելեանին առթիւ ըլլալիք նուիրատուութեանց համար քաղաքս բնակող մի քանի անձանց նախաձեռնութեամբ մինչ յանձնաժողով մը կազմուելու վրայ էր, Օրմանեան Ս. Պատրիարքի կողմանէ տեղւոյս Գեր. Առաջնորդին ուղղուած նամակ մը նոյն նպատակին համար ջանքեր ընել յանձնարարած է իրեն՝ աշակերտութեամբ նոյն հաստատութեան նախկին սաներուն :

Ըստ այնմ, ութն անձնաւորութիւններ միանալով կազմած են յանձնաժողով մը, որ իր առաջին նիստը գումարած է ամսոյս 3 ի երեկոյն Տօքթ. Մախոսեանի բնակարանին մէջ, և յետ կարեւոր խորհրդակցու-

որում չ'ըլլայ :

— Իբաւունք ունիս Ղուկաս :

Բայց Ղուկաս ինքզինքը կորանցնելու վերայ էր :

— Կարծեմ զիս կը ծաղրես, Վարդուհի, մտնալով որ քու եղբայրք եմ :

— Միթէ յանցանքն ի՞նչ է, եթէ դու կը մոռնաս որ ես ամուսին եմ և մայր :

— Ետքը՝ . . . :

— Ետքը, պէտք է որ իմայնոցս ապահովութիւնն ըլլայ իմ ամենամեծ հոգս :

— Միթէ անոնց ապահովութիւնը կը վերահաստատուի, եթէ ես գիտնամ թէ՛ ո՛ւր պահուած է քու էրեկդ :

— Խիղճդ քննէ՛, Ղուկաս. և հոն պիտի գտնես այդ հարցումիդ հաստատական պատասխանը :

Փաստաբանը ցատկեց և կանգնեցաւ :

— Պիտի գղջաս, Վարդուհի, գոչեց սրտաւրի ձայնով :

— Ո՛չ իմ գաղտնապահութեան համար :

— Ոտքերուս պիտի իյնաս :

— Ո՛չ ներում խնդրելու համար :

— Աղի արցունք պիտի թափես :

— Ինչ նման վատ եղբայր մ'ունենալու համար :

Ղուկաս էֆէնտին, մագերը ցցուած, աչքերը կոթակնացայտ, ձեռքը վերցուց իր քրոջը վրայ, այնքան խտրուր է վատ բուր նոյն իսկ ամենավատերուն համար : Ապա ուրեմն ինչու վատութիւններ կը վխտան երկրիս վրայ : Մի՛ գուցէ վասնզի մարդիկ վատ են անգիտակցութեամբ, կամ վատին վատ ըսելու քաջութիւնը կը

թեան ընտրուած են դիւանի անդամները հետեւեալ կերպով :

Մեծ . Տիարք

Հ. Պէրպէրեան՝ Ատենապետ . Յ. Սեթեան՝ Ատենապար . Յ. Մելքոնեան՝ Գանձապետ . Տր. Մախոսեան . Յ. Օհանեան . Գ. Սէլէմեան . Գ. Սիրունեան . Ն. Աղազարմ :

Լիայոյս ենք որ յանձնաժողովին ջանքերը պիտի պատկուին կրթասէր ժողովրդեան կողմանէ ցոյց տրուած համակիր աջակցութեամբ մը :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

—

Իրէթորիա 2 Յուլիս. — Լորտ Բիշնէր կը տեղեկագրէ թէ Յունիս 24րդ սկսող շաբթուան մէջ Պօէրներուն կորուստը 74 սպանուած . 60 վիրաւորեալ, 296 գերի բռնուած և հիւանդ եղած է :

Իրէթորիա 2 Յուլիս. — Թրանսքէի Պօէր յափշտակիչները ի զուր Մաքէարը պաշարեցին : Վարձակալներէն երեսունի չափ երիտասարդներ թշնամին հեռի պահեցին : Զորավար Տալիթ քաղաքը պաշտեց և յափշտակիչները հակառոր ճամբով մը ետ քաշուեցան :

Լոնտոն 2 Յուլիս. — Տէյլի Նիլզ Օտէսայէն կը տեղեկանայ թէ Ռուս կառավարութիւնը Թիպէթի պատգամաւորութեան արտակարգ պատիւներ ըրած է :

Բէքին 2 Յուլիս. — Շանկ-Հայի (Մանչուրի) մահաժողովներուն և տեղացի բըրիտանեայններուն մէջ կռիւ տեղի ունեցաւ և առաջինները յաղթուեցան :

Սէուլ 2 Յուլիս. Գորէական թղթատուններու մէջ ծառայող ճարտիկ պաշտօնեաները յանկարծ ետ կանչուեցան :

Փարիզ 2 Յուլիս. — Խորհրդարանը ընդունեց գործադուլի վրայ պատրաստուած օրինաց ծրագրին առաջին յօդուածը :

Կ. Պօլիս 2 Յուլիս. — Կը հաստատեն

պակի կարծեցեալ ոչ վատերու սրտին մէջ . . . : Առաջին պարագային մէջ, պէտք է լուսաւորել իսկ երկրորդին, պէտք է խորհուրդներ :

Բայց Ղուկաս էֆէնտին չ'զարկաւ : Աչքերովը վերէն վար չափեց չափիկեց իր քոյրը, և հոմեմատար սը հանդարտ ձայնով մը հարցուց .

— Դ՛ու ալ յեղափոխական եղար :

Ո՛չ, ես յեղափոխական չ'եմ, և չ'եմ ալ կրնար ըլլալ :

— Ի՛նչպէս բացատրելու է ուրեմն քու այս խօսքերդ :

— Միթէ անպատճառ յեղափոխական ըլլալու է քիչ մ'ազատ խօսելու համար :

— Ազատախօսութիւնը՝ հեռու է միշտ ճշմարտախօսութիւն ըլլալէ :

— Այդ մասին իբաւունք ունիս, Ղուկաս, ուստի ես կը յայտարարեմ որ յեղափոխական չ'եմ, բայց օրուան յեղափոխականներուն ուսումնասիրութեամբ կը շահագրգռուիմ, եթէ ո՛չ յաջող գոնէ պատուաւոր յեղափոխական ըլլալու պայմանները զաւակներուս սորվեցնելու համար :

2 .

Ղուկաս էֆէնտին իր ձեռնարկին անյաջողութիւնէն չ'վհասեցաւ, և իբաւունք ալ ունեցաւ : Ինչ որ իր բուն ձեռք չ'կրցաւ կատարել, պարզ զրկուած մ'ի գլուխ հանեց :

Պատմուած եղելութիւնէն երկու օր ետք, գիշեր մը փաստաբանը մտախոհ կ'ընթացէր իր ծովափի աւազներուն վրայ : Օղբ խոնաւ էր և երկիրներ ամպամած : Մովը հանգարտ էր և նաւերուն նշանաւորները հեզիկ կը ցօլանային ազի ջուրին մէջ :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ANCH' IO SON TOMO

(ԵՄ ԱՆ ՄԱՐԳ ԵՄ) (9)

Գ .

— Կը լսե՞ս, գոռաց փաստաբանը կատողած, զիս անարգել է՞ ըսի :

— Ի՛նչ ըլլայ, թող ըլլայ. սա քու գիտնալու բանդ է :

— Իմ գիտնալու բանս . . . իմ գիտնալու բանս այն է որ պէտք է գիտնամ թէ՛ ո՛ւր է քեռայրս :

— Գիտնաս ի՛նչ պիտի ընես :

— Ո՛չ ինչ. միայն իմ իբաւունքս է գիտնալ :

— Ամեն իբաւունք փոխադարձ պարտականութիւն կ'ենթադրէ : Ի՛նչ պիտի ըլլայ քու պարտականութիւնդ :

— Ձայն պաշտպանել՝ իբրև փաստաբան, անոր վրան հսկել՝ իբրև ազգական :

— Ենորհակալ եմ : բայց անիկա առ այժմ ո՛չ պաշտպանութեան պէտք ունի, ո՛չ հսկողութիւնն :

— Այնքան ապահով է իր թաքտոցը :

— Անուշտ :

— Թերեւս հիւպատոսի մը տունն է :

— Անկարելի չ'է :

Թերեւս ալ յեղափոխականի մը քովը :

— Ետ կարելի է :

— Բայց ինչո՞ւ բուն իր տանը մէջ պահ-

Թէ՛ Պ. Զինօվիէֆ յայտարարած է ս: վա-  
ճառականական նոր բանակցութիւնները չը  
պիտի հաստատէ Ռուսիա, մինչև որ մար-  
տային սակացոյցները կարգադրուին :

Լոնտոն 3 Յուլիս . — Հասարակաց խոր-  
հրդարանին մէջ Լորտ Գրանպօրն յայտարար-  
եց թէ կառավարութիւնը Ռուսիայ զրկուած  
թիպէթական պատգամաւորութեան նկատ-  
մամբ որոշ տեղեկութիւն մը չ'ունի և այս  
մասին ո և է զեկուցում ըրած չ'է Ռուսիայ:

Նիւ-Եօրք 3 Յուլիս . — Տաքութիւնը  
տարապայման է Երեկ 225 մահ պատճա-  
ռեց :

Կ. Պօլիս 3 Յուլիս . Ժանտախտի կտակա-  
ծելի գէպը մը կը նշանակուի . ճամբորդնե-  
րը մեկնելու ատեն առողջապահական այ-  
ցելութեան մը պիտի ենթարկուին :

Կ. Պօլիս 4 Յուլիս . — Սուլթանին եր-  
րորդ կինը մեռաւ (սառուք իրեն) :

Լոնտոն 4 Յուլիս . — Թալանք կը կար-  
ծէ թէ՛ Միջերկրականի նաւատորմի զին-  
կատմամբ Պ. Առնօլտ Փօսթէրի ըրած յայ-  
տարարութիւնները փափաքուած սպասու-  
մութիւնը չ'են ներշնչեր :

### Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

#### ԹՐԱՆՍՎԱԼ

Հարաւային Աֆրիկէի թղթաբերները  
աւելի չափական և հետաքրքրաշարժ լուրեր  
կը բերեն, քան հեռագրաթերը, որոնց  
հաճոյքով կը միանայ յաճախ գրաքննիչին  
աշխատակցութիւնը :

Ասոնց կարգէն է և Կրաւի վերջին թը-  
ւոյն պարունակած Կրաֆ Ռէնէթի շրջակա-  
յի վաճառականներուն ուղղեալ մէկ պաշ-  
տօնական յայտարարութիւնը, որով անոնք  
կը հրաւիրուին իրենց վաճառքները քա-  
ղաք մտցնել :

Նոյն իսկ մշակութեանց արդիւնքները  
պէտք է հոն փոխադրուին, հնձուելէ ան-

Յտեւէն ոսնածայներ լսելով գլուխը դար-  
ձուց, և մթութեան մէջ նշմարեց երկու սուտեր  
որոնք գէպ իրեն կողմը կը յառաջանային : Սի-  
րային ամօլ մը թերեւ, որ՝ մեծապէս սխալե-  
լով՝ խաւարը կ'ընտելէ իրեն խորհրդակից : Բայց  
գիշերը միայն սիրահարներու համար եղած չ'է:  
Մանաւանդ այնպիսի խոսովեալ ժամանակներ,  
ո՛վ գիտէ ինչի՛ր տեղի կ'ունենային այդ մթու-  
թեան հովանաւորութեան տակ : Իրականութիւն-  
ներ արգէն շատ անգամ խիստ հեռու ձգած էին  
ամենաճոխ երեւակայութիւնները : Տարիներու  
փորձառութեամբ հասկցուած էր որ փախտա-  
կանները և յեղափոխականները մեծ համակ-  
րութիւն չ'էին տածեր փողփողուն լուսոյ վը-  
րայ : Ո՛վ զինք կրնար ապահովցնել որ այդ եր-  
կու ստուերներն ալ սէրէ տարբեր շարժառիթ  
մը չ'ունէին թափառելու համար այդ աւազնե-  
րուն վրայ : Ամեն պարագայի մէջ դադանիքի մը  
տիրանալ կրնայ իր օգուտն ունենալ : Փաստա-  
բանութիւնը հասցը կ'ապահովէ, բայց միթէ մե՞ղք  
է մի քիչ աւելի բարեկեցութիւն երբ մարդ գիտ-  
նայ օգտուիլ զիպուածէ մը . . . Փափկանկատու-  
թիւն . . . անհատական իրաւունք . . . ի՛նչ անի-  
մաստ բաներ, երբ խնդիրը անձնական շահու  
վրայ է . . . :

Ուստի Ղուկաս էֆէնտի փութաց ինքզին-  
քը նետել նաւակի մը մէջ, որ խրուած էր ա-  
ւազներուն վրայ : Եթէ կտեւէն իկողմերը զինք  
տեսած չ'էին, անշուշտ պիտի կրնար քանի մը  
բառ կորզել անոնց խոսակցութիւնէն . իսկ եթէ  
չարարողաբար տեսած էին, անաարակոյս լը-  
ռութեամբ պիտի անցնէին : Ամեն պարագայի  
մէջ ինք բան մը չ'կորսնցնելէն զատ շահող պի-

միջապէս յետոյ և բոլոր ամփոփուած իրե-  
զէնները կարելի չ'պիտի ըլլայ քաղաքէն  
գալիս արտածել, առանց զինուորական իշ-  
խանութեան հրամանին :

— Պօէրները վերադարձնուած մտած  
և կրցածին կողպուած են և յայտարարու-  
թեամբ մը գիւղաքաղաքը ազատ պետու-  
թեան Մայրաքաղաքը հռչակած են :

— Ռէյնի զինուորական գործողութեանց  
մէջ, ուր ար Ռէթ կը հրամայէր, Տըլարէյ  
հրոցանի ի ձեռին կը գտնուէր պատերազմիկ-  
ներուն մէջ և անձամբ կրակ կ'ընէր : Իր ալ  
կողմի պատերազմիկը սպաննուած և ձախ  
կողմինը վիրաւորուած լինելով հանդերձ,  
պատերազմը մոլեգնութեամբ շարունակուած  
է և մարմնակոյտեր գիղուած են :

Պօէրները յաջողած են առաջին յար-  
ձակմամբ մը վերադառնալ իրենց կորսնցու-  
ցած գիրքը, սակայն անգլիացի օգնազօր-  
քերու հանիւր ստիպած է զիրենք թողուլ  
իրենց գիրքին մէկ մասը :

— Թերթերուն հետեւելով՝ Յունիս 16  
թուականաւ Քարէն ստացուած հեռագիր մը  
կը ծանուցանէ թէ այս օրեր՝ Պօէրները անգ-  
ղիացի գրչերապահները պաշարած են Պառ-  
բլիէն 10 մղոն հեռի :

Գիշերապահները մէկ մեռեալ, ինը կա-  
լանաւոր և երկու անհետացածներ ունեցած  
են :

#### ՃԻՊՈՒԹԻ

— Յունիս 13 ին երբ ձիպութի ըստը  
բնակիչները ըստ իրենց սովորութեան ժամը  
9ին սրճարաններու մէջ հաւաքուած են,  
յանկարծ մէկ մէկու ետեւ հրացանի պայ-  
թիւններ լսուած են և ամբողջ քաղաքը  
վրդո՛ւմի ենթակայ եղած է :

Պատճառն է եղեր 20-30 լաւ զինեալ  
Ապիսինցիներու կողմէ կառավարական բան-  
տին վրայ եղած յարձակում մը, հոն բան-  
տարկեալ իրենց մէկ ընկերը աղատելու նը-  
պատակաւ :

Պահականոցի զինուորաց և Ապիսինցիներ-  
ու մէջ բաւական ծանր բաղխում մը տե-

տի ըլլար, քանի որ այդ գիշերաշրջիկներուն  
գէմքերը պիտի կրնար որոշել :

Արգար աղային անյայտանալէն ի վեր երկ-  
րորդ անգամ ըլլալով տիկին Վարդուհի՝ մուծը  
կ'ոխելէն ետքը՝ գաղտագողի գուրս ելած էր փա-  
խտականը հիւրասիրողներուն այցելութիւն  
տալու և իշխանացուն քաջալերելու համար : Տի-  
կինը կ'զգար որ ամուսինը անել ճամբու մը մէջ  
մտած էր անխոհեմաբար : Նա փոխանակ անյայ-  
տանալու Գայմագամը գոհացնելու էր : Բայց հի-  
մայ ա՛լ շատ ուշ էր . եղելութիւնը տարածայ-  
նուելով այլայլած, և հասած էր մինչև ընդ-  
հանուր կառավարիչը, որ սաստիկ հրամաններ  
կուտար՝ Ս . ի մէջ չ'խուզարկուած ծակ չ'ձգել  
մարդը գտնելու համար : Այդ վիժուկը՝ իր ան-  
յայտանալով՝ վտանգաւորապէս գործօն յեղափո-  
խականի մը մտրթիւն մէջ մտած էր . հետեւաբար  
պէտք էր գտնուիլ ողջ կամ մեռած :

Վարդուհիին պարտականութիւնն էր նաեւ  
Ղուկասին ըրածը պատմել իր բարեկամներուն,  
և զանոնք փաստարանէն զզուչացնել :

Երբ տիկին Արգար աղան ձիբոլամօյին  
տունը մտաւ, իշխանացուն բազմոցի մը վրայ ըն-  
կողմանած կ'ըլլակ կը քաշէր նախանձելի անհո-  
գութեամբ մը՝ ձերբունի իտալացին սենեակին  
մէջ վեր վար կը պտըտէր՝ միշտ ձեռքերն ետե-  
ւը, միշտ կորուքամակ, միշտ կէս խուր աչքերով .  
ձիւզէրէ գիրք մը կը կարդար և Մարիէթթա  
ոլուն կը մաքրէր, զբողոքով՝ զոր անմիջապէս  
ձգեց, այցելուէին մեծարելու համար :

— Ձիւզ գործի վրայ, հէ՛, տիկին ըսաւ վար-  
դուհի :

զի կ'ունենայ և երկու կողմէն վիրաւորեալ-  
ներ և մեռածներ կը գտնուին :

Թէ ինչո՞ւ լանտարկուած է եղեր Ա-

պիսինցին . —  
Ապիսի մը չափ առաջ կառավարական  
ոստիկաններն Հապէշ մը ծեծելով լանտա-  
ռաշնորդել կ'ուզէն եղեր, այս վերջինը ի-  
րեն տրուած հորուածներուն չ'համբերելով  
կը քաշէ իր վեցհարուածը և յաջորդաբար  
կ'սպաննէ երկու ոստիկաններ և այսպէսով  
ինք բանտ կ'առաջնորդուի և գիտենք թէ  
ինչպէս ձիպութի խաղաղութիւնը կը վըր-  
դովի :

### ՀԱՅԱԿԱՆ ՍՐՃԱՐԱՆ

“ԿՈՒՍՆ ԲԱՅԷ ԵՒՇԱՆ”

— 1906 —

Էզպէթիէ, Սըլէմիա պատի գէմ, Տիար  
Գառնիկ Սիրունեանի սեփականութիւնը եղող  
սոյն հաստատութիւն՝ որ Գահիրէի ամենէն գե-  
ղատեսիլ և ամենէն օգտուուն գիրքը կը գրաւէ,  
ոչ միայն միջազգային այլ նոյն իսկ հայկական  
ժամադրաւայր մը հանդիսացած է :

Սպասարկութեան մասին ցոյց տրուած փոյ-  
թըն, ըմպելիաց մտքութեան համար տարուած  
խնամքն ու գիներու չափաւորութիւնը ուրիշ  
ո՛չ մէկ տեղ կարելի է տեսնել : Հոն՝ ամեն ճա-  
շակ իր գոհացումը կրնայ գտնել :

Օտար լեզուաւ լրագրաց հետ կը գտնուին  
հայերէն ամեն թերթեր :

ԿՈՒՍՆ ԲԱՅԷ ԵՒՇԱՆ հասցեով եկած նամակ-  
ներն և աւանդներն անմիջապէս կը յանձնուին  
իրենց տէրերուն :

Վերջապէս միայն մէկ անգամ այցելողը  
կ'ընարէ սոյն Սրճարանը ընել իր ամենօրեայ  
յաճախաւայրը :

ԿՈՒՍՆ ԲԱՅԷ ԵՒՇԱՆ

Էզպէթիէ, Սըլէմիա պատի գէմ

### ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 5 ՅՈՒԼԻՍ 1901

284	4278	6945	797	2439	385
620	1633	1619	2982	4307	3258
3285	3427	5053	6278	6892	6361
7700	7611	8038	8293	8324	8578
		8648	8316	8787	

— Լաւագոյն ժամանց չ'եմ ճանչնար, տի-  
կին պատասխանեց Մարիէթթա :

— Իրաւուք ունիք . բայց կը խնդրեմ, ար-  
գելք չ'ըլլամ :

— Երբէք . ձիւզէրէ կրնայ ինձ փոխանոր-  
դել այս գործին մէջ :

— Ձեր այ՛րը :

— Ինչո՞ւ չ'է . միթէ երկրիս վրայ կը գըտ-  
նուի՞ն իրարու օգնելու աւելի պարտաւորեալ  
ուրիշ անձինք քան այր ևս կ'ին :

— Տիկին, անկարելի է չ'սքանչանալ ձեր  
գաղափարներուն վրայ :

— Այդ գաղափարներուն կամ սկզբունքնե-  
րուն հեղինակութիւնը ինձի չ'պատկանիր : Իմ  
խօսքս, զոր ես ևս ձիւզէրէ միշտ գործադրած  
ենք, ուրիշ բան չ'է բայց միայն կատարումը  
այն խոստումներուն, զոր փոխադրաձարար ը-  
րած ենք՝ պսակադրութեան միջոցին՝ աստուծոյ  
և մարդոց առջև : Բայց, տիկին, չ'եմ կարծեր  
որ ձեր պատուաբեր այցելութեան վարկեաննե-  
րը ասանկ պարզ խնդիրներու շոյալի խորհիք  
թերեւս կ'ուզէիք խորհրդակցիլ Արգար աղային  
հետ . այն պարագային ձեզ միտակ կը թողունք :

— Տիկին, պատասխանեց Վարդուհի յուզ-  
ուած ձայնով, թէ՛ ձեր և թէ՛ ձեզ սիրող երկու  
անձերուն կողմէն մեզի ցոյց տրուած բարեար-  
տութիւնը անկարելի կ'ընէ որ ձեզմէ գաղտնի  
որ և է մտածում մ'ունենանք ներկայ հանգա-  
գամանքներուն մէջ, ինչ որ իմ ամուսնոյս պի-  
տի ըսեմ, զայն աւելի ձեզի պիտի ուղղեմ քան  
անոր : Առանց ձեր մեծողութեան ո՛վ գիտէ հի-  
մայ ի՛նչ կացութեան մէջ պիտի ըլլայինք :

(Շարունակելի) Ա . ՊԱԼԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«Արշալոյս» ի Տպարանէն ճաշակաւոր տպագրութեամբ լոյս տեսաւ, նորին Ս. Օժուրիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Վեհափառ Հայրիկի երկասիրութիւնն «Վերջալոյսի Ձայներ» որոյ մասին արդէն խօսած էինք ասկէ առաջ:

ՏՕՔՔ. Ա. Յ. ՔԵՐԷՍՏՐԻՉԵԱՆ

Իր գլխիւնքը Շարա գլօտ-Պէյէ փոխադրած լինելով ի Տահէր, Շարա Պիրքէթ-էլ-Րաթլը, քրէրներու վարժարանին դիմաց, կը ծանուցանէ իր արգոյ յաճախորդաց որ յետ այսու իր խնամոց պէտք ունեցողները հաճին դիմել վերոյիշեալ տեղն ուր կը գտնուի կէս օրէ առաջ ժամը 9-11 և կէս օրէ յետոյ 3-5:

ԳՐԱՇԱՐԻ ՊԵՏԲԷՐ ԿԱՅ

Ո՛ւր են մեր գործ փնտռող և չ'կայ ըսողները: Երկու վարժ գրաչարի պէտքը կայ. մէկը «Արշալոյս» ի, և միւսը Հրատարակչական Ընկերութեան» համար. ամսական 80-120 ֆր. դիմել «Արշալոյս» ի Խմբագրատունը: Ուսանող գրաչարներ ալ կ'ընդունուին:

ԱԶԴ

ԱՐՇԱԼՈՅՍԻ Տպարանէն լոյս տեսած է ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԿԻՐՔԷ՝ որը տարիներէ ի վեր սպառած էր: Այս ութ ու կէս երկսունակ մեծագիր ֆորմայով գիրքը Գահրէի Հայոց Հրատարակչական Ընկերութեան երախայրիքն է: Գինն է ԵՐԵՒ ՖՐԱՆՔ

ԳՈՒՒՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐՔ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ Ս Բ Ա Ն Ս Ս Ա Հ Ա Յ ՓԱՐԻՉ 1901

Սոյն ընդարձակ Բառգիրքը, որուն Առաջին Հատորը 1061 մեծագիր երեսներէ բաղկացած և բազմաթիւ պատկերներով զարդարուած հրատարակ ելած է և կը պարունակէ Ա-Ի գիրքը, կը վաճառուի ի Գահրէ. դիմել ի Պէյն-էլ-Սուրէն Հայոց Եկեղեցին, ՕՐ. ԲՐԻՍՏԻՆԷ ԳԱԶԱԶԵԱՆԻ

ՍՐՔԱՒ ԼԱՅՔ

ԼՈՆՏՈՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
Հիմնեալ 1843  
Բացարձակ ապահովութիւն. — Չափաւոր ապահովագին. — Ապահովագրի հնութեան համաձայն շահու առաւելութիւն. — Իրաւանց պահպանութիւն՝ ապահովագրի վրձարմանց յապաղուի պահուն. — Չափող պարագաներու մէջ անմիջական հաշուեյարգարութիւն. — Շահու բաժանում ամեն ՀԻՆԻՏԱՐԻՆ մէկ անգամ:  
Ս. ԼԵՕՆԱՐ  
Ընդհանուր ներկայացուցիչ Եգիպտոսի

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԹՈՐՈՍԵԱՆԻ

Ս Ի Ն Կ Ե Ր

ԲՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ


Պալատի փողոց. Խաչնէտալի սեփականութիւն, Պրիսթլ Օթէլի ճիշդ դիմաց, Գահէ Տր. Լա Պուրսի կից:

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍՆԱՅԻՂԵՐ ՈՒՆԻ  
Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներս են ևւ ասոնցմէ մինչև ցարչ 17,000,000 ծախուած է:

400 է սակի վիսյականներով ևւ մեայններով վարձատրուած, Երաշխատուեալ մեքենաներ:

ԱՄԵՆԷՆ ՄԵՍ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է:  
ՀԱԳԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՐԻՆ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ՆՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ, աշագրտութիւն գարձել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ ի յասկանչին:  
ԳԻՆ ՉԱՓԱՌՈՐ

Չրի գասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենայից համար, յաճախորդաց տուներուն մէջ:  
Վճարմանց Դիւրութիւն  
Փոխանակութիւններն մեքենայից ևւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները: Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼՈՆ՝ որ գրեթէ այսարհի ուրիշ սրէ է ընկերութենէ մէկ միլեար աւելի է:  
ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՑ ներկա յայտուցիչ ի Գահրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ ևւ ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի ևւ աւելի ապահովագրի կը գանձէ:  
ԱԼԷԲՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործադատար յ'Աղեքսանդրիա:

ԿՕՇԿԱԿԱՐ

Գ. ԵՒ Յ. ՊԵՏՐԻՅԱՆ ԵՂԱՐԱՐՔ Պագար-Մուրուր թիւ 39

Կ'ուղէ՞ք ունենալ հմուտ վարպետի ձեռքէ ելած, ֆրանսական նորաձեւութեանց համապատասխանող, սաքերը կոշտերու ցոււերէն ազատ պահող և դիմացկուն կոշիկներ:  
Գիմեցէ՞ք ի Պաղար-Մուրուր թիւ 39 խանութին մէջ հաստատուած Պէյրեան եղբարց, որոնց գործածած ապրանքներու տուկունութիւնն և ձեւերու մասին ունեցած հոգածութիւնը ամեն տարակոյսէ վեր է:  
Պէյրեան եղբարք իրենց յաճախորդաց ըրած յանձնարարութիւնները փութով և մեծ խնամով կը պատրաստեն:  
Բաւ է միայն մէկ անգամ դիմել իրենց. ապահովագրէս մնայուն յաճախորդ պիտի լինիք:

ԳԱՐԻՈՒՏԻ ԸՆՏԻՐ ԱՇՈՒԹ

Ունէին՞ք մինչև ցարչ հայ մը որ գիտնար մտածել թէ՛ ամուսին ալ մեծաքանակ սպառում կ'ունենայ ևւ կրնայ կարեւոր շահաւորագրել:  
Առեւտուրի այդ ասպարէզն ալ օտարներուն թողուած էր:  
Տիար Յակոբ Վարդանեան (Սանտեանի քեւորդի) այժմ ամենաբնորոք ամուսին վաճառականութեամբ կ'զբոսի ևւ մրցում բացած է օտարներուն դէմ:  
Գիմեցէ՞ք իր մթերանոցը Սուր-Սուրաթ թիւ 17 ևւ 18:  
Անխաթիլա կշիռ ևւ չափաւոր գին:

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ — ՍԻՄՈՆ ՖԵԼԷԿՍԱՆԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ  
Գին 10 Գահեկան ողջ: